

ՏՈՒՐԻՆԻ ՊԱՍՏԵՐԿԱԸ

Տուրինի պաստառակալը բրիստոնեայ կաթոլիկ աշխարհի ամենաթանկագին մասունքներից մէկն է:

Թէկն եղան մարդիկ, որոնք այդ պաստառակալը կեղծ համարեցին, և ցոյց տուին, որ նրա վրայ մարդկային կերպարանքի նման նկատուած պատկերը մի ինչ որ խարեբայ նկարչի գործ է րայց և այնպէս այդ պաստառակալը համարւում էր և համարւում է այն իսկականը, որ տուեց Յովսէի Արեւաթացին Քրիստոսի ժաղման համար:

Պատմութեան մէջ այդ մի կտոր սրբազան կտաւի մասին կան մութը ակնարկութիւններ:

Յայտնի է, որ Կոստանդնուպոլսում ԺԲ դարում պյսպիսի մի կտոր յարգի էր, բայց ԺԳ դարում մէկի ձեռքով գողացուեց և անհետ չբացաւ:

1352 թուին ոմն Ալիչէլմ Ալիլերսեկսէլ արևելքից բերեց Շամպայն ինչ որ մի պաստառակալ, որը ձեռք ձգեցին Լիրիայի կրօնաւորները և սկսեցին ցրյց տալ այն իբրև սրբութիւն:

Դրա պատճառով մի տաք վէճ բարձրացաւ, որ իր վօայ առաւ լուծելու Կլէմենտ է պապը: Բայց և այնպէս վէճը չըլուծուեց:

Սավոյեան իշխան Փիլիպոս Էմմանուէլի հրամանով տեղափոխուեց այդ պաստառակալը Տուրին քաղաքը և զետեղուեց առանձին պահարանի մէջ, որի բանալիները պահում են մէկը՝ պապի, միւսը Տուրինի եպիսկոպոսի, երրորդը՝ Սավոյեան իշխանի՝ այժմեան նոտալական թագաւորի մօտ:

Այս ժամանակից յայտնի է նա Տուրինի պաստառակալ անունով:

Այդ պաստառակալը մի դեղնած կտաւի կտոր է 4 մետր 10 սանտիմետր երկայնութեամբ, 1 մետր 40 սանտ. լայնութեամբ: Մի ծայրը թեթև խանձուած է և վրան երևում են հետքերն

այն ջրի, որի մէջ նետուեց 1532թ. հրդեհի ժամանակի, երբ
բէք մադ պյուռէի:

Այդ պաստառակալի վրայ արդարեւ կան ինչ որ նկար ձե-
ւագնող մութ բծեր:

Պաստառակալը պահւում է իրեւ ամենամեծ սրբութիւն
և միայն բաղադրիկ հանդիսաւոր դէպբերում զոյց է արւում ժո-
ղովրդեան, որ շատ հազիւ է պատահում:

Բայց ահա 1896թուին, Տուրին քաղաքում կայացաւ ծի-
սակատարական առարկաների ցուցահանդէս և Թագաւորը թոյլ
տուեց ի ցոյց գնել Թանկագին պաստառակալը: Նրանից նոյն
ժամանյ մի շարք լուսանկարչական պատկերներ հանեցին. լու-
սանկարի վրայ պարզ երևաց մարդու կրկնակի պատկեր՝
երեսի եւ մէջքի կողմերից: Այս փաստը անմիջապէս յայտնի
դարձաւ ամբողջ կաթոլիկ աշխարհին, բայց վրան ուշ չդարձ-
րին, որովհետև մեծամասնութիւնը համազուած էր, որ պաստա-
ռակալը «հսկութիւն» չէ, և շատերը զիտէին վրան նկարներ
ձեւացնող նկարչի մասին եղած աւանդութիւնը:

Այսպիսի տեղեկութիւններ կային Տուրինի պաստառակա-
լի մասին մինչև վերջին ժամանակս, երբ բոլորովին պատահ-
մամբ նրա լուսանկարչական պատկերները ընկնում են Սօրբո-
նի կենդանաբանութեան պրօֆէսուրի օգնական Պօլ Վինե-
նի ձեռքը, որ և հետաքրքրում է նրանցով.

Նրանում մի միաբ է ծագում—այդ նկարները վերլուծու-
թեան ենթարկել խիստ զիտնական տեսակէտից և, իրեն գոր-
ծակից առնելով Փիդիկոս զնդապետ Կոյլսոնին, փայլուն կեր-
պով կատարում է այդ ինդիրը, լոյս ընծայելով երկու տարուց
յետայ իր հետազօտութիւնների արդիւնքը Դե Linceul du Christ
վերնագրով:

Այս զիրբը զիտնական և կոերական աշխարհներում առաջ
բերեց ահազին իրարանցում:

Ինչի՞ մէջ էր Վինենի հետազոտութիւնները և ո՞ր-
պիսի հետևանքների է հասցրել նրան:

Վինենի սկսեց դիտել իր ձեռքին եղած նկարի վրայի
մութ բծերը:

Արդարեւ կար ինչոր բան, որ յիշեցնում է մարդկային

կերպարանք, բայց սրա հետ միասին նկարի մէջ օտարութին հէնդ այդ բժերի դասաւրութիւնն է, Արդեօք սա ի՞նչ կարող էր լինել:

Եւ Ակնեօնի մէջ մի միաք է փայլում: գուցէ սա նեզատիւ (ժխտական) պատկեր լինի, պյսինքն ոպիտակը դուրս եկած սև, սեր սպիտակ:

Նա դրանից հանում է պողիտիւ (դրական) պատկեր եւ ստանում է մարդու բոլորովին մի պարզ նկար, զարմանալի իր նրբութեամբ ու ճշտութեամբ մարդակազմական բռնոր մանրամասնութիւնների կողմից:

Հրա՛շը: Բայց ի՞նչպէս է առաջացել այս նեգատիւ պատկերը. կեղծիք չէ՝ արդեօք:

Վինեօնը դրականապէս հաստատում է-ո՛չ, սա չէ կարող մարդու ծեռքի գործ լինել և բերում է բոլորովին պարզ ապացոյցներ:

1. ԺԴ. և մանաւանդ ԺԲ. դարում, որին վերագրում են պատառակալի մասին եղած տեղեկութիւնները, լուսանկարչութեան յասին նոյն իսկ գաղափար չկար, հետեւապէս չեր լինի պատկերի նեգատիւի գաղափարը:

2. Եթէ այդ գործը ձեռնարկեր նոյն իսկ մեր ժամանակում մի խոշոր նկարիչ, հազիւ թէ կարողանար գլուխ բերել մի այդպիսի ինդիր: Պատկերի նեգատիւը արտադրելու ամեն մի փորձում նկարիչը անշուշտ սխալմունքների մէջ կընկնէր:

3. Աերջապէս, մարդակազմական այն ապշեզուցիչ ճըշտութիւնը, որ երեան է հանել լուսանկարչութիւնը, վկայուս է որ դա մեքենայական արտադրութիւն է: ԺԴ. դարի, նամանաւանդ ԺԲ. դարի, նկարիչները ոչ այդ աստիճան կատարելութեամբ իմանում էին մարդակազմութիւնը, ոչ այդ աստիճան ճարտարութեան էին հասցրած արուեստը իրականութեան կողմից:

Դրանից զատ՝ մի շարք մանրամասնութիւններ պարզ են անհերքելի կերպով Վինեօնին բերին այն եզրակացնթեան, որ այստեղ խօսք անդամ չեր կարող լինել այդպիսի մի գործ մարդու ձեռքով շնորած լինելու հնարաւրութեան յասին:

Բայց ի՞նչպէս կարող էր ստացուիլ այդպիսի մի նկար:

Վինեօնն սկսեց պաստառակալի մէջ առարկաներ փաթաթել, մտածելով, որ այդ միջոցով թերեւս ստացուի ար-

տատպրւածի նման մի բան: Նա ինքն իր վրայ փորձեր կատարեց և արդարեւ ստացաւ արտատպուածի նմանութեան բայց իսկա աննոռնի, ամելի հասարակ բծերի նման, այնպէս որ, չէր կարելի համեմատել անզամ Ծուրինի պատառակալի վրայ եղած նկարի հետ:

Եւ նորից Վինեօնի զլիառ ծագում է մի փայլուն ենթադրութիւն. արդեօք սա ներգործութեան արդինք չէ տարսութեան վրայ. արդեօք ինքը մարմինը չէ ներգործել իրենից արծակած ճառագայթներով կտաւի վրայ, ինչպէս ներգործում է լոյսը զգայուն թիթեղի վրայ:

Հեսց այստեղ նրան օգնութեան է հասնում ֆիզիկոս Կոյլսոնը, որ յայտնի է իր գիտնական աշխատութիւններով լուսանկարչութեան վերաբերմամբ:

Նա վաղուց նկատել էր, որ մետաղեայ բանի մի փոշի ընդունակ են տարածութեամբ ներգործելու զգայուն թիթեղի վրայ. Խնչպէս օրինակ ցինկը ներգործում է արծաթի աղի վրայ:

Վինեօն և Կոյլսօն միասին փորձեր են անում: Նրանք վերցնում են Քրիստոսի զլիի զիպսից նկարը, ծածկում են ցինկի փոշիով և դնում են Կիւմիերի զդայուն թիթեղի վրայ մի մութ արկդի մէջ: Երկու օրից յետյ դուրս հանուած և յայտնի կացուցուած թիթեղը տալիս է Քրիստոսի զլիի փառաւոր նեգատիւը: Թիթեղին մօտ դիպած մասերը տուել էին սուր արտատպումներ, աւելի հեռու եղածները՝ թշլ: Դրանից յետոյ ստացուած պողիտիւը տուել է Քրիստոսի զլիի բոլորովին պարզ պատկերը:

Բայց սրանից ի՞նչ է դուրս գալիս: Քրիստոսի մարմինը չէր կարող արծաթի աղերե մէջ թրչուած լինել:

Բայց շկա՞ն արդեօք թիմիապէս ներգործող եւ անմիջապէս մարմինից դուրս եկող ուրիշ ազդեցութիւններ եւ պաստառակալը արդեօք այդպիսի ներգործութիւն հակազդող որ եւ իցէ հիւթ չէր պարունակուած:

Վինեօնը դիմեց Աւետարանին, սրբազան աւանդութիւններին և ամեն աել զտաւ ցուցմունք, որ պաստառակալը խընկու ու հայուէու էր եղել:

Կոյլսոնի հետ Վինեօնը ինկի և հալուէի վրայ փորձեր է կատարում և շուտով գտնում է, որ վերջինը՝ շատ լաւ հազդում է:

Հալուէի մէջ պարունակուում են երկու հիմունք՝ ալօին և

ալօէտին—որոնցից ալօէտինը արագ թթւում է բուսաղերի (շոռ) ներգործութեան տակ կազմելով մութ զանգուած:

Այս հիման վրայ նրանք սկսում են կատարել իրենց փորձերը: Սկզբից առնում են մի կտոր կտաւ իւղոտ-հալուէոտ են անում և ներգործում են նրա վրայ անուշադրի շոգիով: Կատար մըգում է, պահելով իր բոլոր յատկութիւնները՝ փափկութիւնը և կակդութիւնը առանց վնասելու զործուածքը:

Կոյլսոնը և Վինեօնը բարդում են փորձը: Նրանք վերցնում են զիպսից (գաճ) շինուած մի ձեռք, ածում եմ անուշադրի շաղադ, յետոյ հաղցնում են երկայն շվեդական ձեռնոց, փաթաթում են ամբողջովին կտաւի մէջ և այս կերպով թաթախում են կտաւի շաղանի մէջ: Հետևանքը՝ կտաւի վրայ ստացւում է ձեռքի փառաւոր նեզատի նկարը:

Անուշադրի շոգիները անցնելով ձեռնոցի կաշու միջով, ներգործում են հալուէի մէջ թրջուած կտաւի վրայ և թողնում են ձեռքի կաշու է մասի արտատպութիւնը կտաւից:

Ամենագժուար բայլն արուած էր:

Եյժմ պէտք էր վճռել արդեօք մարդկային մարմինը (կամ նրա նշխարները) թէկուզ յայտնի պայմաններում արձակում են իրենից անուշադրային շոգիներ:

Այս ինդիրն արդէն վճռած է բժշկութիւնը:

Հիւանդ մարդու մարմինը ընդունակ է արտադրելու ահազին բանակութեամբ հիւանդու բրտինք, որի մէջ կալ անուշադրի պարունակող մէզմիտ:

Մահուան բրտինքի մէջ մէզմիտի բանակութիւնը լինում է շատ մեծ և աւելանում է՝ համապատասխան մեռնողի բաշտ տանջանքներին:

Ամենքին յայտնի մահուան մածուցիկ բրտինքը պարունակում է մէզմիտի այնպիսի բանակութիւն, որ երբեմն բիւրեղանում է մարմին մակերևոյթի վրայ:

Ուրեմն պարզ է որ մածուցիկ բրտինքով ծածկուած մեռնողի դիակը ընդունակ է արտաթորելու անուշադրային շոգիներ, որոնք ներգործելով հալուէոտ գործուածին՝ հակազդեցութեան կիրածեն հալուէի խառնուրդի վրայ:

Այստեղից եզրակացութիւն. Ցուրինի պաստառակալը անկասկած պատած է եղել ցաւ կրած մարդու մի դիակ:

Ծագում է մի նոր ենդիր. Նրա մէջ փաթաթուած է եղել Քրիստոսի՝ թէ մի ուրիշի մարմինը:

Վինեօնը սրան պատասխանում է դրական կերպով. Քրիստոսի եւ ոչ ոք ուրիշի:

Լուսանկարչութիւնը ոչ մի կասկած չէ թողնում այս բանի մէջ. Քրիստոսի մահուանից առաջ քաշած բոլոր տանջանքների հետքերը դրոշմուած են այս պատկերի վրայ ապշեցնից մանրամասնութեամբ և ճշտութեամբ:

Գլխի շուրջը, մազերի մէջ և ճակատի վրայ կան մի շարք բծեր- ակներև հետքեր փշեայ պսակիւ. Քրիստոսի գիրքը բոլորովին մեռելային է. կրում է վրան Կայիշափայի բակում կոպիտ զինուորների տուած հարուածների հետքերը. Այդ ուկրներն ու թշերը ուռած են, ուռոշցը խանգարում է քթի ուղղութիւնը. մի աչքը ծածկուած է ուռած կոպիտ տակ, միւսը կեսարաց է. կրծքի ձախ կողմում ցածում սեխն է տալի մի բիծանատարակոյս գեղարդով խոցուածի հետք է այն, ձախ ձեռքը (աջը չէ երեսում) և ոտքերի գարշապարները վերքեր ունին. միւսերի տեղերն են:

Այս ամենի հետ կայ ոչ ոքին յայտնի մի մանրամասնութիւն:

Դատելով ձեռքե վրայի եղած վերքից՝ Քրիստոսը զամուած էր եղել խաչին, ոչ թէ ափերի, այդ ձեռքերի դաստակների միջնով:

Սա բացատրում է պարզ կերպով: Մարմնի ծանրութիւնից ափերը կպատառուածէին, այն ինչ դաստակների միջնով մեխուած մարմինը չի կարող պատառուել դաստակը.

Այնուհետև լուսանկարը տալիս է ամբողջ մարմնի վրայ եղած մուլթ բծերի առանձնաւեսակ գծերի շարք, որ դառն ծաղկանքի-մտրակահարութեան պարզ հետքերն են:

Գծերն ունին ծայրերը պարզ փոսերով ցիրուցան անցած գննջերի տեսք:

Ցայտանի է, որ շռոմեական մտրակը բաղկացած էր մետաղեայ գնդակներով վերջացող կաշեայ շերտերից:

Ի վերջոյ լուսանկարի վրայ երեւում են սրունքների մօտ շարդուտուած ուները: Մի խօսքով կան մեր Աստուածային վարդապետի այնքան մանրամասնորէն նկարագրուած տանջանքների բոլոր հետքերը:

Ֆիզիքօ-քիմիական գննութիւննը քսան դարուց յետոյ հաստատեց աշխարհիս ամենամեծ անցքի բոլոր վկաների ցուցմունքները:

Արդեօք սա գիտութեան յաղթանակը չէ կամ նոյն իսկ մեր, անհաւատների առաջ մեծ ճշմարտութիւնը հաւատա դոզ Աստուածային նախաֆնամութիւնը չէ:

Այս ամենը չէ՝ ենթարկւում կասկածի, երբ փաստ է հանդիսանում, որ պաստառակալը հալուէռա հալակի խառնուրդի մեջ թրջուած է եղել և որ Յիսուս Քրիստոսի մարմինը ծածկուած է եղել մահուան մաշող քրտնքով: Աւետարանից յայտնի է, որ Քրիստոսի մարմինը չլուացին, այլ ուղղակի փաթաթեցին զմռու ու հալուէռու կտաւով և դրին գերեզմանի մէջ:

Այս ամենն այսպէս. բայց ահա ծագում է մի նոր հարց. ինչո՞ւ չէր կարող այդ կտակի մէջ փաթաթուած լինել մի այլ ոք նոյնպիսի տանջանցներ քաշած, նոյնպիսի քրտնքով ծածկուած: Հնում սովորութիւն է եղել պաստառակալը թրջել հալուէի խառնուրդով:

Ճշմարիտ է. բայց սակայն մինչեւ այժմ միայն մի պատառակալ է գտնուել վրան նկարի դրոշմով:

Եւ Վինեօնը պատճառը բացատրում է, միաժամանակ ջլ-քելով հակառակորդների թերահաւատ հակաճառութիւնները:

Ժամանակակից լուսանկարչութեան մէջ յաջող նկար ըստացում է միայն այն դէպքում, երբ լոյսի ներգործութիւնը թիթեղի վրայ տնել է յայտնի ժամանակամիջոց:

Պահաս ժամանակ պահուած նկարը տալիս է պղտոր պատկեր, շատ պահուածը՝ կարող է բոլոր հետքերը նշնչացնել:

Այս յայտնի է ամենքին:

Ներկայ դէպքում նոյնն է առաջանում:

Փորձերի մի շարքով Վինեօնը համոզուեց, որ հալուէռու կտակի վրայ անուշադրի շղգիների ազդեցութեամբ ամենալաւ նկարը ստացում է երկու օր անցնելուց յետոյ եւ քոլորովին փշանում, ոչնչացնում է երեք շորս օրուայ ազդեցութիւնից յետոյ:

Սրանից աւելի ապացուցող ի՞նչ կարող է լինել:

Երրորդ օրը ս. Զատկին պաստառակալը ազատուած է եղել Յարուցեալի մարմնից:

Եւ այսպէս, գիտնական անհերքելի հետազոտութեամբ Վինեօնը ապացուցեց, որ քրիստոնեայ ամբողջ աշխարհի համար Տուրինի պաստառակալը մեծ և անտարակուսելի մասունք է:

Հակաճառութիւնների միջոցում, Փարիզի գիտութեանց

Ճեմարանի մէջ, Վինեօնը ահազին ժամանակ գործադրեց կեղծիք լինելու հնարաւորութեան մասին ենթադրութիւնները հերքելու համար, եւ արդարեւ կտաւի վրայի նկարն այդպէս կեղծելու համար նկարիչը պիտի զիտենար բադի նկարչութիւնից ու տեխնիկայից, մարդակազմութիւն, բնախօսութիւն, պիտի լինէր կենսաբան, յանդռւզն րէալիստ, և վերջապէս պիտի համարձակուէր աշխարհի մեղեքի համար մեծ նահատակի մարմինը նկարել մերկ և ծածկել սպիներով ու խողերով.

Սկսայանի է, որ այս ամենը ենթադրել գժուար՝ աւելի ուղիղը՝ անկարելի է:

Այսպէս է Վինեօնի—դիտնական հետազոտութիւնների արդիւնքները, որ ահազին դպրոց է հանել Գրանսիայի մէջ:

Մի քանիսը հետազոտելու բուն փաստը համարում են մի տեսակ յանցանք, բայց մեծամասնութիւնը ապշած է, թէ այս գիտնական հետազոտութեան մէջ ինչպէս ներդաշնակօրէն միացած են հաւատը և բանականութիւնը ճիշդ գիտութեան բանաստեղծական աւանդութեան հետ:

Թարգմ. ՀՐԱՆՏ. ՄԵԼԻՍՈՆ.
